

14863

891.99

C.21

1909

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇԽԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա. ՇՈՒՊ. ՀԱ. ՀԱ. Ա. ԶԱՐ

ՄԻ ԱՆՄԵԴ ԶՈՀ
ԿԱՄ

ԽՈՐՏԱԿԻԱԾ ՍԵՐ



ԳԻՆ 2 ՂՐՅ

891. 99
6 - 21

Վ. ՊՈՈՒԹՈՒ
1909

413

ԱՇՈՒՂ-ՇԱՀՆԱԶԱՐ

391.99

6-21

ՄԻ ԱՆՄԵԼ ԶՈՅ

ԿԱՄ

ԽՈՐՏԱԿԻԱԾ ՍԵՐ

ՍՅ ՍՊԻՇԵՍՅԱՆ ԱՎԱՐԱՐ

ԺԱՌԱՅԻ ԳՈՅՆ ԱՅ ՑԱՌԱՅԱՅՈՒ

ԺԱՌԱՅԻ ԳՈՅՆ ԱՅ ՑԱՌԱՅԱՅՈՒ
Մարդիկ անգուք են

Այս չար աշխահում
Աշխահի դէկն է
Չար մարդկանց ձեռնում:

Յանձն մարդկանց պայտ անց անց

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎԵՆԻՆ Կ. ԱՇՔԵՆԵ

ԴՐԱՅԱՆ Յ ԲԱՅԱ

ՎՐԱՅԱՆ ԱՎԱՐԱՐ



ՏՊ.ԳՐՈՒԹԻՒՆ

Փ. ՍԱԳԱՆԱՆ

Կ. ՊՈԼԻՄ, Գուրզունկու խան թիւ 7, ՀԱՀԱԹԻԱ



347x1-4.2.

ՈՒԱՐՄՈՒՅՆ-ՀԱՅՈՅ

ՀՈՅ ԲԺԱՄ ՊԱ

ԶՕՆ

→ 400 ←

ԳՐՔՈՑԿՍ ԸՆԾԱՅՈՒՄ ԵՄ

ՎԱՆԵՄԱՇՈՒՐ ԵԽ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՒ

ԱՐԱՄ ՀԱԼԱՃԵԱՆՑԻՆ

ի նշան ազնիւ բարեկամութեան.

Հեղինակ
ԱՇՈՒՐ Տ. ՇԱՀՆԱԶԱՐ
Մանկավարժ-Ռւսուչից.



1899-59

ՄԻ ԱՆՄԵՂ ԶՈՀ

ԿՈ.Մ

ԽՈՐՏԱԿՈՒՅԾ ՍԵՐ

Նոտ ցուրտ էր, Մոսկվայ մեծ մայրաքաղաքը ծածկուած էր ձիւնի թանձը սաւանով, և արգելում էր երթևեկութիւնը:

Այդ օրը, ամէն կողմում, ամէն տան մէջ ուրախութիւն էր տիրում, ամէն դասակարգի մարդ այդ օրը իրեն բախտաւոր էր զգում, ամէն տան մի անկիւնում մեղան կար զրուած, որի վերայ զարդարւած էր օղիով, և անուշեղեներսավ: Հօդանչում էր այդ հին մայրաքաղաքի հազար ու մէկ եկեղեցիների զանգակները: Ամէն մի քրիստոնեայ ցանկանում էր եկեղեցի գնալ, ներկայ լինել այն օրւայ հանդիսաւոր պատարագին, որը տարին մէկ անգամ էր գալիս, ով գիտէ միւս տարի ու արժանի այդ տօնին, այդ ժամերգութեանը:

Բախտաւոր մարդիք հազել էին իրենց թանկագին մուշտակները, որը կառքով, որը խւր սիրելու հետ թևանցուկ, գնում էին եկեղեցի: Կարծես թէ բնութեան խատութիւնն էլ չեր ազգում այդ մեղի բախտաւոր մարդկանց վերայ:

Իսկ միւս կողմից գնում էին աշխարհի խորթ զաւակները, ճղելով ձիւնը իրենց մերկ ոսներով: Գնում էին խեղճերը ու ձեռքերը միշտ իրար էին քսում որպէս զի տաքսմայ: Եւ այդ մարդկանց վերայ կարծես թէ ցուրտը չեր ազգում, չընայելով որ շատերի կուրծքը բաց էր, և նրանց մերկութիւնը ծածկելու համար, ունէին ցացոտիներ որ ձիւնի փաթիւները ազատ մուտք էին գործում նրանց մարմնի վերայ: ահա նրանց ըոլոր հարստութիւնը: Դրանք էլ էին գնում, այն տեղ, որտեղ որ գնում էին իրենց աղանները: Այդ խեղճերն էլ պէտք է ներկայ լինէին այն պատարագին, որ տարին մէկ անգամ էր գալիս, որ ուրախացնում էր արդէն ուրախ սրտեր, ուրախացնում նաև վազուց վիրաւոր սրտեր, որոնք իրենց կանքում ուրախ օր չեն տեսէլ, երջանիկ վայրկեաններ չեն անցկացրել: Ի՞նչ զարմանալի անհաւասարութիւն կայ աշխարուա, մանաւանդ Ռուսապտանաւոմ: մէկը մեռնում է քաղցից, անօթութիւնից, ցրտից ցրտաման է լինում, իսկ միւսը ուրախ,

նստած իր ապարանքում, գիտէ միայն հրամայել, բարկանալ, զեղիս կեանք վարել, և աշխարհի շուայլ կեանքը վայելել :

Անցնում էին չքաւոր մարդիք գնում էին վիթխարի շինութիւնների մօտով, գլուխները միշտ պտտեցնում էին, եւ բանի էին տալիս նրանց տերերին, և ասում էին իրարու. Աստուած մեղ ինչո՞ւ է ստեղծել, խօսում էին, տրանջում էին Աստուածոյ վերայ, կարծելով թէ մարդկանց հարստութիւնը միայն բարձրեալի պարգևն է.

— Գիտէ՞ք պարոններ, ասում է աղքամներից մէկը, ու ձեռքերը փչում, տեսէք թէ Աստուած ի՞նչքան է սիրում Սիմէօն Պետրօվիչին, այնքան կարողութիւն է տուել որ եթէ նախելոք լինի այդ կարողութիւնը նրան յաւիտեան կը բաւականացնի :

— Ո՛չ, պատասխանում է մի ուրիշը, որ գեռ երիտասարդ էր. Աստուած տեղեկութիւն չունի մարդկանց հարստութիւնից կամ աղքամութիւնից, մարդիկ իրենք են ստեղծում իրենց համար հարստութիւն. ահա ձեզ պատմեմ թէ ինչպէս են հարստանում մարդիք.

«Աշխարի մէջ բարեխիղձ մարդը չի կարող հարստանալ, և այդքան կարողութիւն յետ ձգել : Պաշտօնեան կաշառակերութեամբ է զբաղւում, ու այդպէս հարստանում, վաճառական ես պէտք է վաշխառութեամբ պարապէս, այն հարուստները որոնք հիմա իրենց համար ահազին ջղիրքեր են շմել, այդք բոլորն էլ զրկել են, տուն են քանդել, կեղեքել, ու այնպէս են հարստացել :

«Բարեկամներ, եկեղեցիների մէջ նոյն իակ հաւասարութիւն չկայ, Աստուածոյ տունը որ մենք երկիւզածութեամբ ենք տոք դնում, ու կանգնում ենք դռան մօտ, մեր աղաները իրենց տիկինների հետ գնում են սուրբ սեղանի մօտ, ու բազմում իրենց համար յատուկ պատրաստած տեղը, մի խօսքը եկեղեցին հարուստների համար մէկ քլիւսի նշանակութիւն ունի, որտեղ կարելի կ'լինի ժամանակ անցնել : Եկեղեցին հիմայ ո՛չ թէ Աստուածոյ տուն է, այլ բիւրօկրատների տուն, եկեղեցին հիմա ո՛չ թէ աղօթատուն է այլ աւազակների տուն, մի խօսքով հարուստները պղծել են այն նուիրականութիւնները, որը պատկանում է աղքամներիս : Օրինակ, Սիմէօն

Պետրովիչը գնում է եկեղեցի հինգ կոսէկանոց մոմի տեղ մէկ ռուբլանոցն է վառում որպէսզի նա կարողանայ հաւատացեալ երեւալ ժողովրդի աչքին, նա աշ ձեռքով մոմ է վառում եկեղեցում, գլուխը քարերին է խբում, բայց ձախ ձեռքով մարդկանց տուն է քանդում, ինչպէս որ քանդեց ձերունի Մաքսիմի տունը :»

Այսպէս խօսելով, գիւղացիները հասան մայր եկեղեցու գաւիթը, որ նորից զօղանջեց եկեղեցու զանդակները, տիսնը մելամաղձոտ : Գիւղացիները, չքաւոր մարդիք վերցրին իրենց գլխարկները, տաս անգամից աւել խաչակնքեցին երեաները, և երկիւղածութեամբ մուն եկեղեցի : Եկեղեցում տեղ չկա՛ր, բախտաւոր և անբախտ մարդկանց խուռն բազմութիւն հաւաքւել էին եկեղեցի, որ ասեղ ձգելու տեղ չկար, մարդկանց շնչառութիւնը անգամ կտրւում էր :

Եկեղեցիների դռների մօտ հաւաքւած էին լինում հազար տեսակ մուրացկաններ, ձեռքեր կառկառում, ողորմութիւն խնդրում, բայց այդ ձայները լսող չկար, նրանց համար չէր այդ տօնը, այդ նւիրական օրը :

Անբախտ մուրացկանները դրսում կանդնած գողդողում էին, յանկարծ լսեց քահանակի խապու ձայնը, որ ասում էր. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» :

Հազարաւոր մարդիք գլուխները խօնարհած լսում էին քահանակի ասած սուրբ խօսքերին, ծունկ էին չոքաւմ, գլուխները խբում էին եկեղեցու սալայատակին, ցանկանում էին ցոյց տալ փրկչին իրենց հաւատացեալ լինելը, ու չէին ցանկանում յիշել փրկչի այն խօսքերը որ սրանից հազար իննը հարիւր տարի առաջ է ասել. «Սիրեացէս զընկեր քո, իրրե զանձնքո» : Նրանք իրենց սրտի, իրենց խզձի պարագը կատարած էին հաշում, երբ որ մոմ էին կացնում եկեղեցում, նրանք մոռացել էին դրսում կանդնած հարիւրաւոր մուրացկաններին, նրանց կարծիքով մուրացկանը, մարդ չէր, նրանց համար չէր ծնունդ ու Մկրտութիւնը, նրանց համար չէր Զատիկը, մի խօսքով նրանց համար չկայ ոչինչ, քանի որ աղքատ են, նրանց համար չկայ կեանք, երջանկութիւն :

Դրսում կանդնած աղքամների մէջ կանդնած էր մօտ ութառն աղքական երկու աչքով կոյր Մաքսիմը, իւր փոքրիկ թոռի հետ, քնքոյց Սոնիայի հետ :

Մաքսիմը ժամանակով մեծ վաճառական էր, իւր բարեսրառութեան պատճառաւ կորցրել էր ամէն բան. վաղուց մեռել էին անօթութիւնից նրա կինը և աղջիկները, ու իրեւ յիշատակ թողել էին ծերունի Մաքսիմին փոքրիկ Սոնիային, որ միսիթարում էր իւր ծերացած կոյր պապին, Սոնիան գնում էր ողորմութիւն էր իւր խնդրում, հաց էր հաւաքում, լեցնում իւր ձեռքի փոքրիկ տոպպակում, ու բերում պահպանում էր իւր խեղճ ու կրակ ծերացած պապին: Փրկչի ծննդեան օրը, ծերունի Մաքսիմը յուսալով որ մի գուցէ ողորմութիւն կրստանայ հաւատացեալ ժողովրդից, հագել է իւր ցնցոտիները ու եկել կծկուել էր եկեղեցու դրան մօտ իւր փոքրիկի հետ: Մաքսիմը հիւանդ էր, իսկ նրա ցնցոտիների միջց երեւում էին բարձր մանրը, որոնք ցրտից կարմրել էին. դողդողում էր զառամեալ ծերունին, ու իւր հիւանդ ձայնով ասում էր, «ողորմութիւն արէք, Աստուածակը ժողովութ, անտուն, անտէր աղքատին, կոյր մուրացկանին:»

Բայց այդ խեղճ ծերունու ձայնը մնում էր ձայն բարբառոյ յանապատի, նրա չնչառութեան գոլորշին բարձրանում էր օղի մէջ, և կարկուտի պէս թափում էր խեղճ ծերունու վերայ, ու անցնում խեղճ ծերունու հագուստի, ցնցոտիների մէջով:

— Սոնիա՛ . . .

— Ի՞նչ է պապաջան:

— Սոնիա Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ ասացին:

— Ասացին պապաջան, ինչո՞ւ հարցրիր:

— Ես մեռայ էէ, ցուրտ է այս որդի գնա՞նք:

— Պապաջան մի քիչ էլ սպասենք դեռ չուտ է հիմայ կելնեն եկեղեցին, գուցէ մի քանի կոպէկ կրստանանք:

— Սոնիա՛ . . .

— Ի՞նչ է պապաջան:

— Սոնիա դրամ չունի՞ս մօտը:

— Ո՞չ, պապաջան դեռ չտուին:

— Ախ քար են քա՞ր, այ որդի հիմայ խղճով մարդ չկայ աշխարում, մարդիկ գաղան են դառել ու միմիանց են ուտում:

Ախ անբախտ զաւակս աղքատների համար ոչինչ չկայ

այս աշխարհում, Քրիստոսի Ծննդեան տօնը մեզ համար չէ, այլ նրանց համար, այն անդութիւների համար:

— Պապա, բայց մենք ինչո՞ւ հարուստ չենք միւսների նման, մենք ինչո՞վ ենք մեղաւոր, այս Աստուած.

— Սոնիա ջան, մի՛ յուսահասուի, մենք էլ հարուստ ենք եղել, մենք էլ մեծ օջախ ենք եղել, բայց ո՞չ թէ որանց պէս անդութ հարուստներ: Օր չվներ որ մեր տունը տանիեակ աղքատներ չկերակրուէին, այսպէս օրերի, այսպէս պաշտօնական օրերի, ևս հարիւր ուուրլով աղքատների համար դրամ եմ բայց ել, բայց չեմ յիշել երբէք: Խղճով, գութ ունեցող հարուստը երբէք հարուստ չի մնայ, այլ ինձ նման դժբախտ կը լինի:

Ծերունի Մաքսիմը արդէն հիւանդ էր անդառնալի ցաւով, նա դողդողում էր կանդնած տեղը, ի՞նչ ունէր, նստել չէր կարելի խննաւ, ցուրտ քարերի վերայ, ստիպուած էր կանդնել, սպասել խեղճ ծերունին, որ մի գուցէ մէկ բարեգութ մարդ, կը խղճայ իւր վերայ ու կ'տանի իրենց տուն, այդ խեղճ որբուհու հետ:

— Սոնիա՛

— Ի՞նչ է պապաջան,

— Սոնիա տեսմո՞ւմ ես, այն մարդիքը որոնք իմ չնորդիւ, իմ ձեռքով տուն տեղի տէր են դարձել. նրանք էլ չեն ցանկանում իմ երեսիս նայիլ: Տեսմո՞ւմ ես մեր տան քայլքայման պատճառը այս մարդն է եղել, որ փաթաթուած է իւր թանկագին մուշտակի մէջ, ու վերաս չի էլ նայում, դա Սիմէն Պետրովիչն է, որ մի ժամանակ իմ ծառան էր, իմ կոշիկ սրբողը, ես դրան իւր ամուսնութեան օրը տասը հաղար բուրլի եմ աւել, ընծայ, բայց հիմայ, նա ինձ երկու կապէկ էլ չի տափիս, արհամարտանքով է նայում վերաս: Պատմում էր ծերունի Մաքսիմը, ու արտասուքը հեղեղի նման թափում էր նրա ձերմակ մօրուքի վերայով, ողողում, մաքրեցնում էր նրա զղղղուած մօրուքը: Ծերունի Մաքսիմը դողդղալով շօշափեց բռնեց իւր որբուհու ձեռքը և նորից սկսեց ողլալի ձայնով կրկնել իւր անգիր արած խօսքերը.

— Ողորմութիւն արէք, իսէր Քրիստոսի Ծննդեան, ողորմութիւն արէք անտէր աղքատին:

Ծերունու այս խնդիրն էլ մնաց անլսելի:

Յանկարծ խեղճ ծերունին մէկ ճիշ սրծակեց, մի վիրաւոր ժի՛չ, ասելով. Աստուածասէր ժողովուրդ, ինձ մէկ ճա՛ր արքք, ես փետացայ ցուրտից. օգնեցէք ինձ թշւառ ծերունուս :

Բայց ոչ մէկ օգնութիւն, մարդիք շահագործելու համար էին գնացել եկեղեցի, գնացել էին միմիանց խարելու, և ոչ թէ աղօթելու :

Մէկ էլ լուեց եկեղեցու բեմից քահանայի խռպոտ ձայնը որ ասում էր. «Քրիստոս ծնաւ և յայսնեցաւ»: Նորից հազարաւոր գլուխներ գետին էին խոնարուում, գլուխները սալահատակին էին խափում, առանց մտածելու որ դրսում կանդած են մարդիք, թշւառ մարդիք: Ծերունի ԱՄաքսիմը ընկած էր անշունչ սառը գետնի վերայ, բայց ոչ ոք չէր զբաղւում նրանով, կամ խզճանարսում:

Որբուհին յուսանաստական ձայներ էր արծակում, աղաղակում, լաց էր լինում. օգնութեան կանչում, բայց մարդիք անտարբեր էին գտնուում դէպի այդ տեսարանը, պէսպի այդ սրտածմիկ տեսարանը :

—Պապաջան, բա՛ց, բա՛ց աչքերդ, ինձ ինսայիր, մեղք եմ ես, պապաջան որք մնայի, ինձ որին ես յանձնում:

— Եսեղճ երեխան համբուրում էր ծերունի պապի ձեռքերը, երեալ, ընկել էր նրա փետացած դիակի վերայ, գոռում էր ինչպէս մէկ վիրաւոր կորիւն, բայց նրանց վերայ նայող խզճացող չկար:

Ծերունի ԱՄաքսիմը բացաւ իւր չորացած աչքերը, բանեց Սոնիափի թեկից մօտեցրեց իւր չորացած շրթունքներին համբուրեց նրա այտերը որ ցուրտից կարմրել էին ու հոգին աւանդեց, Թողնելով իւր որքին, թշւառ Սոնիային ա՛յն մարդկանց ենթակայ, որոնցից ինքը դժոխ մնաց, որոնց անւանում էր անդութներ, անխիղճներ: Որբուհին կծկած էր անբախտ դիակի մօտ ողբում էր ու անիծում.

—Աստուած հարամ անէ ծեր գլխին այս Ծնունդը, այս նշանաւոր տօնը. ծեր տուները քանդւի, այս եկեղեցին թողքանդւի ծեր դիմին, իմ թշւառ պապս մահացաւ պատճառ ձե՛ր անդիթութեան, խկ դուք անխիղճներ մոմ էք կպյոնում:

Եկեղեցում ծեր մեղքերի վրկութեան համար: Իմ ծերունի պապս չմնուաւ այլ սպանեցի՛ք, այս եկեղեցին ոճրուգործի տուն է դարձել, այսաել հաւատացեալներ չկան. դուք բոլորդ էլ կռապաշտներ էք, անօրէններ:

Այս զայրոյթի, անէծքի հետ միասին խեղճ աղջիկը խփում էր իւր գլխին, մազերն էր փետում, այդ որդիական անկեղծ ձիչը, աղաղակը կարծես թէ կեանք տուեց մահացած ծերունուն, կարծես այդ ձայնը չունչ տուեց այդ փետացած դիակին, ծերին սկսեց իւր թոյլ ձեռքերը տարածել օդի մէջ, որ կարելի էր լինում հասկանալ թէ մէկին է վնտուում: Սկսեց զզլայնել որ կարելի էր հասկանալ որ ասում էր. Սոնիա ջա՞ն, մարդիք անդո՞ւթ են, մարդիք անխիգ են, մարդիք դազան են դասել մարդկանց են, ուտում: Այս խօսքերով կտրւեց թշւառ ծերունու ձայնը:

Վերջացաւ եկեղեցու ժամերգութիւնը, մարդիք սկսեցին կամաց կամաց ցրւել իրենց աները, մայնտում էին այն տեղով որտեղ ընկած էր ծերունու դիակը, բայց նրանք չէին հետաքրքրում աղքանակով, նրանք միայն մի դադտագողի հայացք էին ձգում չորացած դիակի վերայ որի մօտ կծկել էր փոքրիկ որբուհին ու դողլողում էր ցուրտից:

Բոլորն էլ գնացին, քահանաներն էլ գնացին, մրմիջում էր որբուհու շրթունքները: Որբուհին գլուխը դնում է իւր պապի չորացած դիակի վերայ ու քնանում: Խաւարը ի՞ւաւ, իշաւ երկնքեց և բռնեց հին մայրաքաղաքի փողոցները:

Մօսկուայի փողոցները լուսաւորւած էին ելքարական լապտերներով, ամէն խանութի առաջ, փողոցների անկիւններում խմբւած էին մարդիք ու գւարդանում էին:

Մի քանի ժամից յետոյ եկեղեցու բակում հաւաքւած էին մի խումբ ոստիկաններ, որոնք ծերունու դիակը պէտ էր փոխադրէին գերեզմանասուն:

Աղքատ մօրդու դիակը չէն ցանկանում ցորեկ ժամանակ տանիլ գերեզմանասուն, որպէս զի այդ նշանաւոր օրին բախտաւոր մարդիք չ'գայթակալէն, որդէսզի հանգիստ լինի առանց այդ էլ քարացած մարդկանց սրտերը, այն ապառաժ սրտերը: Երեկոյեան ուշ ժամանակ որբուհին գտնուում էր մէկ բարի հայի տան, որը յանձն էր առել որդեղբեկ որբուհուն: Այդ

բարեգութ հայ մարդը խանութպան Եղօն էր, տասը տարի էր անցել իւր ամռանութիւնից, բայց զաւակ չեր ունեցել:

Միւս օրը մարդիք շրջում էին ամանից տուն, փողոցից փողոց, համբուրւում էին մի միանց հետ ու փրկի ծնունդն էին աւետում:

Իսկ Սոնիան տիսուր էր, նա այդ ուրախութիւնը չունէր, նրա մանկական յշողութեան մէջ պատկերանում էր իւր ծերացած պապը, խօսում էր իւր հետ, մէկ էլ յանկարծ գլուխը գնում էր իւր փոքրիկ թաթիկների մէջ ու սկսում էր լաց լինել, հեկեկալ, նա յիշում էր այն խօսքերը որ իւր պապը ասաց իւր մեռնելուց առաջ. «ա՞հ որդի, մարդիք գաղան են դառել, մարդկանց են ուտում, մարդիկ անգութ են».)

Սոնիան արդէն տանը եօթը տարեկան աղջիկ էր, իւր բարերարը նրան ուղարկում էր դպրոց որ որբուհին իւր համար մի ապագայ ունենայ, որովհետեւ շատ դժւար է այն կողմերի ամռանութիւնը:

Խանութպան Եղօն մտածում էր ինքն իրեն. դրամ չունիմ որ կարողանամ օժիտ պատրաստեմ Սոնիայի համար, գնէ ուղարկեմ կարի ու ձեմի դպրոց, մի գուցէ ինքը իրեն համար մի որ և է ապագայ կատեղծի: Շատերի տունն է խորտակել, շատերին թշւառութեան պատճառ է դարձել այն անունը, այն համաձարակի ախտ որի անունը կոչւում է օժիտ:

Յուլիս ամսոյ մի գեղեցիկ երեկոյ էր. լուսնի կաթնանման լոյսի տակ խաւարել էին ելէքտրական լոյսերը. իսկ աստղերը շարան-շարան մի մեծ շղթայ էին կազմել, առել էին լուսնին իրենց մէջ, իրենց գեղածիծաղ աչիկներով պլազմում ու պրազմում էին, զուարձացնում էին մայրաքաղաքի երկուու բազմութեան, որնք զրօնում էին քաղաքի ձեմելիքներում ուրախ, թեանցուկ:

Բնութեան այդ ուրախ երևոյթով մարդիկ իրենց երջանիկ էին զգում, զրօնում, բայց մեծ փողոցի արհեստանոցներից մէկում սստած էր մէկ օրիորդ գլուխը քաշ արած ու անարբառունչ կերպով կար էր կարում ու երգում կանացի քնքոյշ ձայնով մի մելամախճու երգ: Մերթ ուրախութիւն էր զալիս նրա դէմքի վերայ, ծիծաղնում էր, մերթ տիրութիւն, մեռեւ լային ախրութիւն: Դա օրիորդ Սոնիան էր, այն չքնար գե-

ղեցկուհին. Սոնիան փողոցներով անցնելիս հաղար աչք էր թողնում իւր հետեւից, շատերը նրա ծնողներին երանի էին տալիս, և շատ աներում նրա գեղեցկութեան մասին էին խօսում:

Շատ երիտասարդներ էին ցանկանում նրա հետ խօսել, ծանօթանալ, բայց Սոնիան իւր սովորական խոնարհութեամբ շատ լուրջ էր պահում իրեն, և իրեն միսիթարութիւնը գանում էր լուրութիւն մէջ:

Իսկ քաղաքային մեծ ճեմելիքում զրօնում էր մէկ երիտասարդ, գեղեցիկ կազմուածքով, առոյգ, իշխանական յատուկ զգեստներով. նրա վերայ նայողը կ'զգար որ այդ երիտասարդը հասարակ երիտասարդներից չէ, կամ իշխան է կամ արքայազուն:

Իշխանի քաղցր լեզւի վերայ, նրա գեղեցկութեան վերայ սիրահարում էին շատ օրիորդներ, հմայւում էին նրանով, բայց իշխանը միշտ անտարբեր էր գտնում դէպի նրանք, նրա սիրութ գրաւուած էր նա չեր կարողանում զբաղւիլ ուրիշներով, նա սիրում էր մէկին, մէկ գեղեցկուհու: Այդ երիտասարդը անդային մէկ յայնի կալւածատէրի որդին էր, որին անունում էին Նիկողայոս:

Իշխանը այդ օրը շատ տխուք էր և ոչ մէկի հետ չեր խօսում, այլ միշտ ինքն իրեն ասում էր. «Չորտ պատերի» — (Սատանան վերցնի) ու դլուխը շարժում. ինչպէս երևում էր իշխանը մարդու էր սպասում:

Մտատանջութեամբ իշխանը իշաւ պարտէզի սանդուղներով և անցաւ մեծ փողոցի գրօտուարի վերայ, մօտեցաւ մէկ արեստանոցի. տեսաւ որ մի քանի օրիորդներ նաստած կար էին կարում: Իշխանը նայեց այդ խանութի հաստ ապակիների միջից մէկ ցաւալի կերպով յառաջեց ու կրիսեց իւր սովորական խօսքը «Չորտ պատերի» ու անցաւ մի քանի քայլ էլի հետ նայեց տեսաւ որ իւր հետեւից անցնողներ չկան, նորից հետ դարձաւ ու հետաքրքրութեամբ նայեց այդ լուսամուտից նայեց մէկին ու ժպտաց, իսկ նրա կողմից ոչ մի ձայն. ոչ մի փոփոխութիւն:

Այդ օրիորդը Սոնիան էր որ իւր գեղեցկութեամբ համայիշ գրաւել էր իշխանին. իսկ իշխանը մէկ վայրկեան չեր կարողանում մտանալ օրիորդին ու երկու ամիս էր որ գալիս ու այդ տեսարանն էր ներկայացնում:

Օրիորդը զգում էր որ իշխանը սիրում էր իրեն, նա զգում էր որ իշխանը մաշւում էր իրեն համար, բայց նա դիտմամբ ուշադրութիւն չեր դարձնում իշխանի վերայ այլ կասկածանքով էր նայում: Ո՞վ դիտէ ասում էր Սոնիան ի՞նչ սրիկայական նպատակ ունի դէպի ինձ, ես ինձ չեմ թոյլ տայ երեակայական սիրով զբաղւելու:

Նա չեր կարողանում մոռանալ իւր պապին, նրա աչքերի առաջ էր նրա դիմակը, նա միշտ յիշում էր թէ ի՞նչպէս դո՞ւ եւ զաւ իւր պասը ժականակակից մարդկանց անդժութեան պատճառաւ. նա յիշում էր այն մելամախճուտ խօսքերը որ իւր պապը ասաց իւր վերջին չնչում. «Աղջիկս չնաւատաս մարդկանց. մարդիք գաղան են գառել ու մարդկանց են ուտում»: Այդ խոսքերը որ յիշում էր Սոնիան բնաւ չեր հաւատում մարդկանց, ու միշտ կրիսում էր ինքն իրեն, թէ մարդիք անդութ են մարդիք անփողն են...

Սոնիան ուր որ դնար գործով կը տեսներ որ իշխանը իրեն է հետեւում իրեն հետեւից է դնում. բայց չէ կարողանում մօտենալ, ծանօթանալ, իսկ երրորդ ամիսը իշխանը անհամեր էր դարձել ու տանջւում էր պարզապէս:

Յանկարծ լսում է սատիկանի սուլիչի ձայնը, որ ազդարում էր մարդկանց խանութները փակիլու. կարծես այդ ձայնին էին սպասում խանութպանները, մի կէս ժամփց յետոյ փակուած էին մայրաքաղաքի բոլոր խանութները, վարպետունին մօտեցաւ օրիորդներին պատուիրեց որ ձեռքի գործերը ձբդեն, ու խանութը փակեն: Օրիորդները փակեցին ու դնացին դէպի ընդհանուր պարտէզ, որոնց սպասում էին իրենց կաւալերները: Իսկ օրիորդ Սոնիան գլուխը կախ արած զնում էր իրենց տուն, առանց հետեւելու իւր ընկերուհիներին:

Սոնիան գլուխը կախ ճգած տիսուր կերպարանքով զնում էր տուն, յանկարծ պատահեցաւ միենոյն իշխանին, որ սպասում էր նրան անհարեր. բայց Սոնիան ըստ իւր սովորութեան գրանում էր տուն առանց մի որ և է մարդու հետ խօսելու: Սոնիան սիրում էր լուրջ պահել իրեն, նա զիտեր որ եթէ շեղւի իւր ընթացքից որոգաթի մէջ կըկնի, նա ասում էր ինքն իրեն. «Ես գեղեցիկ եմ իմ մի ծիծաղը բաւական է խանգարելու մի որ և է երիտասարդի սիրա. բայց երբ որ պատահում էր նա

ծիծաղում էր, նրա այտերը բացւում էին ինչպէս նոր բացւած վարդ. և յիրաւի եթէ նա մի քիչ թոյլ գտնուէր անպատճառ ու բողայթի մէջ կըկներ.

Իսկ իշխան Նիկողայոսը այնքան էր գրաւած դէպի Սոնիան, որ օրական մի քանի անդամ կը դնար այնտեղով կանցնէր, իւր փափաքին այդպիսով յագեցում կտար: Իշխանը միշտ իւր ծանօթներին ասում էր. այս քան ծանօթներ ունիմ և ոչ մէկը արժէ օրիորդ Սոնիային, Սոնիայի գեղեցիութիւնը մէկ երկնային պարզեւ է որ մահկանացուներից շատ քչերն են ըստանում: Այս երանի այն վայրկեաննին որ իմ նպատակներս կ'իրագործեի, ես համաձայն եմ իմ կարողութեանս մէկ մասը վասնել, միայն թէ արժանանամ նրան:

Մէկ օր էլ Մօսկովի մի քանի օղիաբան սրիկաներ, նրանած էին ընդհանուր պարտէզում քէչփ էին անում. իսկ միւս կողմում մի քանի մուրացկաններ նստած և նայում էին, հիանում էին նրանց վերայ, մի քանի մուրացկանների ըերնի ջուրն անդամ վազում էր երբ տեսնում էին թէ ինչ ախորժակով ուտում էին Սիրոսկայ ծուկը, և օրին կոնծում վերայից: Մուրացկաններից մէկը մօտենում է սրիկաններին ու նրանցից մի բաժակ օղի է խնդրում: իսկ սրիկանները փոխանակ քաղաքավարութեամբ պատասխանելու, յարձակւում են իսեղջի վերայ ու սկսում են ծիծել:

Այդ ժամանակ թէ ինչպէս եղաւ Սոնիան փակեց խանութը ընկերուհների բացակայութեան, ու մոտասանջութեամբ տուն պէտք էր դնար: Շփոթւած գրութեամբ բարձրանում է պարտէզի սանդուխներով, ու սկսում է արագ-արագ գնալ, յանկարծ աչքը ընկնում է այն մուրացկանի վերայ որոնց ծեծում էին սրիկանները, Սոնիան մթափւեց, վայ տուեց իւր գլխին բայց արդէն ուշ էր. չդիմացաւ օրիորդի սիրաը, նա յիշեց իւր պապի դրութիւնը, ու մոտեցաւ սրիկաններին իսուղեց որ թողնեն խեղձ մուրացկաննին. իսկ սրիկաններից մին հանդամանքից օգտուելով ձեռքը ձգեց Սոնիայի վլովը ու ցանկանում էր փաթթաթեւել նրա պարանոցով, կարծելով թէ իւր զիտացներիցնէ: Իսկ երբ օրիորդը ցանկացաւ իրեն պաշտպանել, սրիկան սկսեց հայուանքի կոյտեր թափել օրիորդի հասցէին: Զդիտեմ թէ իշխանը որտեղից բուսաւ այնտեղ օրիորդի առաջ, բարկացաւ սրիկա-

ների վերայ . ու իւր սեպհական սուլիչով երկու անդամ շւարդրեց , մի քանի վայրկեանից յետոյ կամպնած էին նրա առաջ մի քանի սատիկաններ :

— Եսի՞ր սատիկան , այս սրիկաններին հիմայ այս վայրկեանիս կը տանես բանտ , և կասես որ իշխանը ուղարկեց , չ'արձակէք մինչեւ վաղը ես կ'գամ :

— Շատ լաւ , պատրաստ ենք հրամանիդ իշխան :

— Դեհ տարէք առանց ժամանակ վասնելու : Չը նայելով սրիկանների երկար բարակ խօսքերին , սատիկանները տարան բանտ : Ոստիկանները կաշառել չեին կարող , որովհեաւ բանտարկողը իշխանն էր , հրամայողը իշխանն էր :

Տանում էին սատիկանները սրիկաններին , իսկ իշխանը իւր իշխանական խրոխս նայուած քով նայում էր նրանց հետեւց , ու մերթ ընդ մարդք դաշտադողի նայում էր օրիորդին :

— Թոյլ տուէք , ալճնասիրտ իշխան , որ յայտնեմ իմ խորին չնորհակալութիւնս ձեզանից , որովհեաւ ինձ ազատուցիք այդ սրիկանների ձեռքից , եթէ դուք չը մնէք ով զիտէ թէ ինչ վտանգի պէտք է ենթարկւէի :

— Ոչի՞նչ , չարժէ , իմ հրաշագեղ օրիորդ , ես սրանով ցանկացայ իմ ծառայութիւնս մասուցանել ձեղ . ես այս երեք ամիս է որ ցանկանում էի տեսնել ձեղ , ծանօթանալ ձեղ հետ , բայց չէր լինում , հիմայ ես ինձ բախտաւոր եմ զգում որ կարողացայ ծանօթանալ իմ սրտի իդէալի հետ :

— Ուրեմն ընդունեցէք իմ խորին չնորհակալութիւնը , ու թոյլ տուէք ինձ գնալու :

— Թոյլ տուէք ինձ ի՞մ թանկագին , որ ես ձեղ առաջնորդեմ մինչև ձեր տունը . որովհետև կասկածելի ժամանակ է , առանց կաւալերի տուն գնալը շատ վասնդաւոր է :

Չսայելով օրիորդը չէր ցանկանում , բայց ի՞նչ աներ ի նշալէս մերժեր իշխանին , մանաւանդ այն վայրկեանին որ իրեն ազատելէ այդ մեծ վտանգից :

Վերջապէս օրիորդը վճռեց երկու չարեաց փոքրագոյնը , թոյլ տուեց որ իշխանը առաջնորդէ իրեն մինչև տուն :

— Իշխան , ես չէի ցանկանայ որ դուք իմ պատճառաւ հոգնէիք , անհանգստանայիք . ես մինակ էլ կարող էի գնալ :

— Ոչ , օրիորդ , չի կարելի , ես շատ գոհ եմ ձեզանից , որ

թոյլ էք տալիս մի քանի վարկեան ձեղ հետ զրօնելու , ուր ես արդէն կ'ցանկայի սրանից երկու ամիս աւաճ ծանօթանալ ձեղ հետ , բայց առիթ չեր լինում ծանօթանալու :

— Ուրեմն դնանք . . .

Գնում էին երկուսալ մի քանի վարկեան լուռ , մունջ , կարծես իրարու սրաներ էին խօսում միմիանց հետ . վերջապէս իշխանը ընդհատեց լուռթիւնը ու ասաց :

Ահ , պաշտելիդ իմ , ինչքան գոհ կը մնայի եթէ թոյլ տայիք ձեղ հետ թեանցուկ գնալ , ներկցէք ինչընեմ համարձակութեանս :

Չը նայելով օրիորդի համար շատ դժւար էր այդ առաջարկը ընդունել . բայց ինչ աներ մերժել չեր կարող : Թոյլ տուեց օրիորդը , թեանցուկ եկան մինչև օրիորդինց անշուք ընակարանի մօտ . մի քանի վայրկեանից յետոյ բաժանւեցան միմիանցից : Իշխանը կ'ցանկանար մինչև լոյս կանգնել խօսել նրա հետ բայց օրիորդը բարի գիշեր մաղթելով բաժանւեցան նրանից :

Ահա այդ օրւանից սկսեց այդ զոյգի բարեկամութիւնը ու նըրանց անկեղծ յարաբերութիւներ : Իշխանը ամեն օր գնում կանգնուում էր այն փողոցի վերայ որ փողոցով պիտի սննդեր օրիորդը , իշխանը ընկերանում էր օրիորդի հետ գնում էին զրօնելու , ու անստեղից էլ ուղեկցում էր մինչև տուն : Օրիորդը արդէն տամար եօթը տարեկան էր , բայց մինչև այդ տարիքը նա զաղափար չէր կազմել սիրոյ յատկութեան մասին , նա մանաւանդ որ նա խոյս էր տալիս սիրոյ արկածներից . սիրոյ ոռմաններից : Նա մտածում էր իւր արհեստի մասնագիտութեան վերայ . լաւ սովորիմ արհեստու , ասում էր ինքն իրեն , խանութ բանամ , և իմ աշխատած , իմ քրախնքով աշխատած կոռպէնսերով պապիս վերայ մէկ փոքրիկ արձան կանգնեցնեմ , ու վերան գրեմ , «մարդկանց անդիթութեան զոհ» : Ահա այդ գեղցկուհու բոլոր մտածմունքը :

Մի պարզ գեղեցիկ երեկոյ էր . քաղաքային յայտնի թատրոններից մէկում երեկոյի կար : Սնկայի ընկերու հիմերը պատրաստում էին գնալ այնտեղ և ցանկանում էին որ Սոնեան էլ գնայ հետեւնին , բայց Սոնեան չէր գնացել այդպիսի տեղեր , ու չէր էլ ցանկանում դնալ , նա վախով և երկիւղով էր յշում

այդպիսի տեղերի անունները, նա միշտ յիշում էր իւր զառամեռալ պատճին և նրա խօսքերը, նա ասում էր ինքն իրեն. «Ո՞վ գիտէ ինչ կարող է պատահել, ես որբ աղջիկ եմ թող ես էլ չանբախտանամ»:

Աշխատելու ժամանակ ընկերներից մէկը ասաց. — Սո՞նիւայ, սիրելի ընկերուհիս, մենք այս օր պէտքէ դնանք երեկոյի՛մ, որը պէտք է լինի իշխանական թափրոնի մէջ, եթէ կը բարեհաճես գնանք միասին մենք ցանկանում ենք որ դու էլ գաս հետերնիս, բաւական է որքան ախուր մնացիր, ի՞նչ պէտք է լինի քո վերջը:

— Ոչ, ներեցէք ինձ ես չեմ կարող դալ նախ որ չեմ ցանկանում լինել այդպիսի տեղերում. երկրորդ որ մաքուր ըզգեստներ չունիմ, չորհակալ եմ ձեր առաջարկից:

— Սո՞նիա, ես ունիմ մի քանի ձեռք նոր զգեստներ, կը տամ քեզ սիրելի ընկերուհիս կ'հազնես, և կ'գաս հետերնիս, լինդրում ենք մեր խաթըը մի կոտրիր, այս քանի տարի է ընկերուհիներ ենք եղել և մէկ զմէկու չենք ներացրել հիմայ էլ թող չ'սեղանանք միմիանցից:

Սո՞նիան ինչ տեսակ փաստ որ ներկայացնում էր ընկերուհիներին, նրանք համոզիչ պատասխան էին տալիս, վերջապէս նրանց միջամտեց վարպետուհին, իսկ Սո՞նիան չկարողացաւ նրանց առաջարկը մերժելու համաձայնեց: Մի ժամ չանցած բերին իրենց հագուստներից հագցրեցին օրիորդ Սո՞նիային ու գնացին թափրոն:

Մի քանի վայրկեանից յետոյ դաշիճը փայլում էր իւր երկսնու բազմութեամբ, որոնց մէջն էր այդ չքնաղ կոյսը: Օրիորդ Սո՞նիայի գեղեցկութեան վերայ յափշտակել էին երիասարդները, նրանք ցանկանում էին ծանօթանալ, խօսիլ այդ գեղեցկու հետ բայց չեն համարձակուում: Դաշիճում ամէն օրիորդ իրեն համար ունէր բարեկամ երիտասարդ և զւարձանում էր նրա հետ, բայց օրիորդ Սո՞նիան ոչ ոք չուներ, և չը էլ ցանկանում ունենալ, որովհետեւ նատող օրիորդների ձեւ, վարժունքը նրան դուր չէին դալիս:

Երա մոքսովը մանցում էր ելնել փախնել այն տեղից, նա ցանկանում էր աներեւոյթ լինել այնտեղից, նա իւր աչքերը փակում էր որ չտեսներ իւր ընկերուհիներին բայց չը լինում:

Եթէ չամաչեր պէտք է բարձր ձայնով լար այդ զւարձալից դահլիճում: Սո՞նիան վերջապէս վճռեց զօվանալու սկարտւկով դուրս ելնել դահլիճից ու անյայտանար: Տեղից ելաւ մօտեցաւ դունը և վախեցած հետ քաշւեց: Կարծես թէ չէր հաւատում իւր աչքերին, նորից փորձեց դուրս գալ բայց կրկին երեսում էր միևնոյն տեսարանը:

Բարի երեկոյ Օրիորդու, ինչո՞ւ էք շւարել ու նայում ինձ. միթէ իմ գալուստս այդքան անհաճելի թւաց ձեզ ու երկիւղ պատճառեց: Իշխանը խօսելով բոնեց Սո՞նիայի թեից ու նորէն ներս ընթառաւ:

Օրիորդը ճիշտ որ այլայլեց թէ ո՞րտեղից դուրս եկաւ այդ զբգւելի արարածը:

— Սո՞նիա ինձ չես ճանաչում:

— Ա՛, ներեցէք ինձ իշխան որ չ'կարողացայ մէկ անգամց ճանաչել ձեզ որովհետեւ սցսօր զգեստներդ փոխել ես ու աւելի գեղեցկացել:

— Սիրելի Օրիորդս ասա՛ ինձ խնդրեմ ինչո՞ւ ես այդքան գեղեցկացել, ի՞նչ է պատահել:

— Ոչինչ իշխան, ես սովորած չէի այսպիսի տեղերում նստել զւարձանալ. առաջի անգամը լինելով տարօրինակ երեաց ինձ և շատ տխուր էի երանի թէ չգայի:

— Ոչինչ սիրելիս ես եկայ էլ դու տխուր չես լինի, կարծես թէ ես զգացի որ դու տխուր ես, կարծես թէ ինձ մէկ գերբնական ուժ հասկացրեց որ դու այստեղ պէտք է լինես և հինց կարծես թէ դրա համար եկայ: Այս ասաց թեւը անցրեց օրիորդի թեւից ու գնացին նստեցին մէկ անկիւն ստանձնացած:

Իշխանը հագել էր իւր իշխանավայել զգեստները, նրա գեղեցիկ կարմիր դէմքի վերայ երեսում էր կարծ դէպի վերցցւած բեղերը, ու եւրոպական ձեւով ասի ածիււած մօրուքը: Իշխանի կուրծքը զարդարւած էր աղամանդեայ զարդերով, իսկ մատների վերայ փայլում էին բըլանտից մատնիները մէկը միւսից գեղեցիկ և զրաւիչ: Տեսնող անձանօթները զգում, հասկանում էին որ այդ երիտասարդը հասարակ երիտասարդ չէ:

Իշխանի ներս մտնելուն պէս ստքի ելան նւագախտումը զինւորները իւր սպայով իրեւ պատիւ իշխանին. Այս բոլորը տեսնում էր Սո՞նէան և աւելի ևս անհաւատանում էր դէպի

իշխանը։ Իսկ իշխանը ի ցոյց մարդկան հանեց մի թուղթ հարուրնոց բռուլի և կացրեց նւտագիսումքի սպայի հակատին։

Մի քանի վայրկեան լոռութիւնից յետոյ իշխանը դարձաւ դէպի իւր հրեշտակը կոյսը և հաճոյակատար լեզով ասաց։

— Օրին՛րդ, սիրելի՛ հրեշտակս, ինչո՞ւ չես խօսում, ինչո՞ւ ես տխուր ու արտում, միթէ ուրախ չե՞ս որ նստած ես իշխանի մօս և ոչ թէ մի որ և է պատահական երիտասարդի։

— Ուրախ եմ իշխան, շատ ուրախ բայց ի՞նչ ասեմ քանի որ նորութիւն չգիտեմ։

— Շատ լաւ եթէ ես նորութիւն յայտնեմ կ'համաձայնե՞ս թէ ոչ . . .

Օրինրդը հեգնութեամբ կէս ժպիտով պատախանեց։

— Իշխան, չգիտեմ թէ ի՞նչ նորութիւն պէտք է յայտնէք, արդեօք կարելի՞ է այս ասել, կամ ոչ, ես գեռ մարդարէ չե՞մ, և ոչ էլ գուշակով . . .

— Հրեշտակս դու արդէն վաղուց պէտք է գիտնայիր կամ գուցէ գիւենո, որ ես քեզ սիրում եմ. և այդ սէրը մի այն պիսի սէր է, որ բացի Աստուծոյ տուած անխուսափելի մահից ոչ ոք չի կարող ինձ հեռացնել այդ սէրիցը. ես այս մի քանի ամիս է որ հանգստութիւն չունիմ քեզ համար. մէկ բան, մէկ կրակ, մէկ կրակի կայծ է ընկել սիրաս մաշում է ինձ տանջում. ես զգում եմ որ սիրահարւած եմ, կայ մէկը որ ինձ յափշտակել է. իմացիր իմ սիրական աշխարհը ինձ համար չէ քանի որ դու կաս. իմ հրեշտակ իմացիր որ յափշտակել ես մէկ սիրտ, մէկ իշխանի սիրտ, որով դու պէտք է երջանիկ լինես։ Դու ես զո՞ւ, իմ հրեշտակ որ ինձ կեանք պէտք է տաս, առանց քեզ ես կեանք և երջանիկութիւն չունիմ. . .

Ասա՛, ասա ինձ իմ սիրական դու էլ ինձ չե՞ս սիրում, ես ցանկանում եմ որ մէր սէրը լինի յափտանական, ես ցանկանում եմ որ մէր սէրը լինի փոխադարձարար, ամէ խղճայ ինձ Սո՞նիս, պատասխանիր ինձ ե՞րբ պէտք է արժանանամ քեզ. օ՛ Աստուծ իմ, եթէ իմ սիրոս բաց լինէր քո առաջ, այն ժամանակ միայն կհասկանայիր թէ ի՞նչ է կատարում իմ սըրտում. ախ երբ պէտք է վայելիմ քո սէրդ թանկագին հրեշտակ։ Իշխանը սկսում էր համոզիչ խօսքեր թափել որպէսպի կարողանայ գլխահամ անել անսեղ օրինրդին։

Օրինրդը լինիել էր մտասանջութեան մէջ, տանջւում էր դրս անմեղ հոգին, ի՞նչ աներ, հաւատաք արդեօք իւր ականջներին, հապա ոյն խօսքերը, զոր պապս պատւիրեց ինձ։ «Աղջիկս չհաւատաս մարդկանց, մարդիկ խարեբայ են, մարդիկ անգութիւն»։ Արդեօք բացառութիւնը յարդել։ Վերջապէս Սոնիան յուղւած դրութեամբ սիրտ արեց պատասխանելու.

— Իշխան, դու ինձ մի այնպիսի հարց ես տալիս որ շատ դժւար է նրան պատախան գտնել. արդեօք հաւատաք ականջներիս որ դուք ինձ սիրում էք հարազատ և անկեղծ սիրով։ «Եռք իշխան էք և հարուստ, իսկ ես . . . իսկ ես մի աղքատիկ առջիկ, ես որբ եմ իշխան, դժբախտ եմ։ Ես վախում եմ Զեղանից որ մի գուցէ Զեր ինձ հետ տեսակցելը, և սիրահարելը ինձ ապագայում դժբախտութեան պատճառ լինի։ Եթէ իսկապէս ձեր սէրը դէպի լինի կեղծ լինի, հաւատայ ինձ, որ ինձ համար դերեղման պէտք է պատրաստեն. ինձ սէրը ծաւ նօթ չէր բնաւելն, անդորր ու խաղաղ էր իմ հոգին, դու անմեղ պիտոս հրով վառեցիր, ինձ խեղճիս համար տանջանք նիւթեցիր։ Դու ստիպեցիր հաշտել այդ դաղափարների հետ որը ես առելով ատում էի, որից ես միշտ խոյս էի տալիս. ահ, իշխան, ես այդ հարցին չեմ կարող պատախանիլ, ես սարսում եմ այդ հարցը լսելով. ես դողում եմ նրանից։

Սոնիան այս խօսքերը ասաց շատ յուղւած դրութեամբ, նրա այտերը կարմրեցին, նա ցանկանում էր թռչել, փախնել այն տեղից։ Նա ցանկանում էր փախնել դէպի սարերը, ձորերը իւր միսիթարութիւնը որոնելու ամայութեան մէջ. վերջապէս նա կարողացաւ ուշքը գլուխը, հաւաքել, ու ինքնիրեն առել, այսո, ես ինձ գտնում եմ շւարութեան մէջ, ես գտնում եմ սէր կոչուած մեծ հրդեհի մէջ, վառում եմ նրա բոցերի մէջ, Աստուծ դո՞ւ օգնենո, դո՞ւ խղճաս վերաս։ Սոնիան ինչքան ցանկանում էր չմտածել, ցոյց չտալ որ ինքը պաշրւած է սիրոյ հրդեհով, բայց չէր լինում. այդ նրա անդրսնիկ մէրն էր, անդրսնիկ պտուղը։ Սոնիան ասսում էր ինքնիրեն, իշխանը մէկ յայտնի մարդ է, ի՞նչն է ստիպում նրան ամոււնանալ, սիրել մի թշւատ աղջկայ, միթէ մարդիկ այնքան աղջկւ են որ թշւառներին բախտաւորացնելու վերայ մտածեն, ոչ .

աշխարհում գույժ չկայ, եթէ կար հապա ինչո՞ւ իմ խեղճ պապս դժո՞ն գնաց այս անիբառ աշխարհից :

— Սոնիայ, ինչու այդպէս տիսրեցար և ընկար մտատանջութեան մէջ. ի՞մ հրեշտակ, միթէ չե՞ս հաւատում իմ խօսքերին. միթէ թոյլ կտայ իւր պատւին մէկ իշխան մարդ, որ դաւածանի մէկ օրիսրդի, մէկ գեղեցկունու: Ո՞չ, դու բոլորովին անհոգ եղիր ի՞մ սիրական, ես քեզ պէտք է բախտաւորացնեմ, ու հազար աչքնը քեզ պէտք է երանի տան ու նախանձն: Կրկնում եմ նորից որ վստահ լինիս իմ սիրոյ վերայ իմ աղջիւ խօսքերի վերայ. ես քեզ սիրում եմ մի այսպիսի սիրով, որ քեզ սիրել չի կարող ո՞չ մէկը, ոչ մի երիտասարդ: Հո՞գիս, սէ՛րդէ է, սէ՛րդէ որ ինձ այս դրութեան մէջ է ձգել ցիրաւի ճիշդ է Զեր խօսքերը, վաղը նոյն իսկ կարող ես նշանւել ինձ հետ, և կ'վերջանայ Զեր սրտի բոլոր անհանդառութեաները:

— Նատ լաւ ի՛շան, եթէ այդքան հարազատ և անրիծ սիրով սիրում ես ինձ ինչն է քեզ արգելք հանդիսանում, եթէ ցիրաւի ճիշդ է Զեր խօսքերը, վաղը նոյն իսկ կարող ես նշանւել ինձ հետ, և կ'վերջանայ Զեր սրտի բոլոր անհանդառութեաները:

— Այդ ճիշդ է սիրելիս, բայց զիտես թէ ինչպիսի գործեր ունիմ, այդ գործերն են որ ինձ արգելք են պատճառում, իմ այսպիսի խառն զործերը չեն թոյլ տար ինձ որ անմիջապէս ամուսնանամ. այլ ժամանակէ պահանջում, ժամանակ, ա՛ն շուտ կ'վազէ. իսկ ես այդ ժամանակից օգտուելով ցանկանում եմ ծանօթանալ Զեղ հետ, Զեր լիսաւորութեան հետ, դու էլ իմ ով լինելը հասկանաս, ծանօթանաս իմ ընտառութեան հետ որ ամենից կարեւորն է, յիտոյ ամեն բան կը վերջանայ:

— Ճիշդ էք ասում իշխան, Դուք ցանկանում էք ինձ կմախք դարձնել, Դուք ցանկանում էք խել իմ երեսից կուսական աօթանածութիւնը, Դուք ցանկանում էք հեռացնել իմ հրեշտակային անմեղութիւնը ինձանից, Դուք ցանկանում էք Զեր երիտասարդական բիբառ կիրքերէն հաղեցում տալ, այն ժամանակ ձգէք ինձ երեսի վերայ, թողէք ինձ և հեռանաք քինձաւնից այդէք է Զեր բոլոր գաղափարները. այն ժամանակ իշխան, Դու խմացիր որ ոճրադործութիւն արած կ'լինէք. և աւելի լաւ է հիմակւանից ինձ համար գերեզման փորէք: Խնդրում եմ բարի երիտասարդ, եթէ մի այսպիսի գաղափար ունէք պահ-

ւած Զեր սրտում աւելի լաւ է ինձանից հեռանաք ես չեմ նեղանայ ձեղանից. գնացէք շատ օրիորդներ կան, որոնք ինձանից աւելի ևս գեղեցիկ են, ու իրենց չքաւորութեան պատճառաւ, իրենց անտեսական վիճակից ստիպւած ընկել են կեանքի դառնութեան, կեանքի շփոթութեան մէջ, նրանք կարող են Զեր ցանկութիւնը կատարել: Աղաջում եմ բարի իշխան, եթէ այդ է Զեր նպատակը հեռացէք ինձանից:

— Ո՞չ, ո՞չ իմ թանկագին, մեր երկուքիս մէջ Աստուած է կանգնած որպէս վկայ, ես երդւում եմ յանուն Աստուածոյ որ իմ սրտում կեղծութեան, անազնւութեան նշոյլ չկայ, ես սիրում եմ քեզ, և այդ սիրով կ'մտնեմ սառ գերեզման. ուրեմն ասա ինձ հիմայ աղնիւ խօսք տալիս ես, ինձ պիտի սիրեմ յաւիտեան:

— Այս իշխան, հիմայ հաւատացի քեզ. այն Աստուածը որին Դու վկայ բերեցիր թող վրէժիմողիր լինի ուխտազանցին, երկնքում, և երկրի վերայ:

— Ուրեմն ինդրում եմ իմ թանկագին վեր ել զրօննենք միասին: Կէս գիշերն արդէն անցած էր. վեր ելան մեր զոյգերը մի քանի ժուռ եկան դահլիճում, ուրախ և սիրով շաղախւած միասին. հանդիսականների ուշադրութիւնը գրաւած էր դէպի այդ զոյգը, որովհետեւ երկումն էլ ընտրւած գեղեցիկներ էին: Կարձ ժամանակում դահլիճը դատարկեցաւ, Սոնիայի ընկերած գործները գնացել էին արդէն նեղացած Սոնիայից: Սոնիան ցանկացաւ վերջին հրաժեշտ տալ իշխանին որովհետեւ ուշ էր արդէն. իսկ իշխանը կարծես թէ հասկցաւ Սոնիայի միտքը ու խօսքը ընդհատեց.

Սոնիա՛, սիրելի հրեշտակ, ես ինձ պարտաւոր եմ զգում որ տանիմ ձեզ մինչև ձեր տունը, քանի որ միասին մինչեւ հիմայ, իսկ ես վստահ եմ որ չէք մերժեր իմ դիտաւորութիւնը:

— Իշխան ես չեմ ցանկանում անհանդառութեան պատճառականալ, ու Զեղ յոգնեցնել. ես կառք կ'կանչեմ ու կառքով կ'գամ:

— Ո՞չ, Սոնիա դուք ինձ վիրաւորում էք, ես ինչպէս կը հանդառանամ երե դուք մինակ գնաք, հա՛ զիտէք քաղաքի դրութիւնը թէ ինչքան դժւար է մանաւանդ Զեղ համար, որ անկարելի է:

Օրիորդը ատիպւեցաւ հնազանդիլ : Իշխանը հաղցրեց Սոնիայի ժակէտը, և թեւանցուկ սկսամ գնալ : Իշխանը առաջնորդեց Սոնիային մինչեւ տուն, չնայելով իշխանը շատ կ'ցանկանար կամսար կամսդնել խօսել Սոնիայի հետ, բայց նա բարի գիշեր մաղթեց իշխանին ձեռք տուեց ու պէտք է գնար, բայց իշխանը բռնեց նրա ձեռքից ու խնդրեց որ Սոնիան անփոփոխ մնայ դէպի իւր գաղափարները, և վաղը գոյ պարտէզ . ու բաժանեցան միմեանցից :

Իշխանը ինքն իրեն ծիծաղում ու խօսում էր ճանապարհին . համարլաւ պատառ գտայ, մի առ ժամանակ երջանիկ ըրովէն եր կ'անցնեմ, խակ երբոր տեսայ բամբաաանքի պատճառ եմ դառնում կ'ձգեմ կ'հեռանամ. ես միթէ ինձ թոյլ կ'տամ մ պատկել մի պատահական աղջկայ հետ, եթէ լինի նա յաւերժահարս մասնաւանդ որ բոլորովին աղքատ է :

Իշխանը ուրախանում էր որ կարողացաւ թակարդի մէջ ձգել անմեղ կորին . հապա Սոնիան, ի՞նչ էր մտածում. նա յուղւած էր, նա իրեն զգում էր սիրոյ փոթորիկի առաջ ընկած մէկ փոքրիկ փետուրի, որ չգիտէ թէ ո՞ւր է տանում, ո՞ւր է ձգում իրեն չար բախտը . մտածում էր Սոնիան ու լաց էր լինում: Արդեօք նա ինձ հարազատ սրտով է սիրում, արդեօք նա ինձ պէտք է դաւաճանի, չէ՞ որ նա երդւեց, չէ՞ որ նա ասաց « թող Աստուած միջնորդ լինի մեր սիրուն» միթէ մարդ այնքան անգութ կ'լինի որ դաւաճանի իւր խողին, իւր Աստուածուն. ո՛չ, նա ինձ չէ խափում, նա երդւեց. և այդ մտածմունքներով պաշարւած ընկաւ անուշ քնի մէջ, բայց մերթ ընդ մերթ թուում էր տեղից և ասում, ո՛չ, նա ինձ չի դաւաճանի, նա երդւեց :

Սրեք բաւական բարձրացել էր, երբ ձերունի Եղօն եկաւ . և արթնդեց իւր աղջկան, առարկելով թէ ուշ մեացել, խառնութի ժամանակը անցել է: Օրիորդը ելաւ, բայց դլուխը ցաւում էր վերջապէս հագաւ իւր զգեստները ու զնաց խանութ: Նրա աչքին միշտ պատկերանում էր իշխանը իւր գեղեցիկ զգեստներով, ու հաճոյակատար լեզուով . նա մի վարկեան չէր կարողանում մուանալ իւր անցեալը, նրա առաջ պատկերանում էր իւր անցեալը, իւր պապը, նա յիշում էր նրա չարչարանքը, նրա տառապանքը, բոլորը զնում հնումում էին նրա

յիշողութիւնից, մնում էր մի պատկեր, մի գեղեցիկ պատկեր, մէկ իշխանի դէմք, որ յիշեցնել էր տալիս Սոնիային մի ապագայ, ապագայի երջանկութիւն: Սոնիան զլուխը դնում էր իւր փափուկ թաթիկների մէջ, ու հեկ-հեկում էր, հանում էր իւր խորտակուած սրտից աղիողորմ հառաջանքի ձայներ, որ կարելի էր լինում հասկանալ. իշխան, անգութի եթէ ինձ դաւաճանե՞ս . խափի՞ս, հաւատացէք որ ինձ համար գերեզման պիտի պատրաստես . ինձ կ'մնայ միայն անձնասպան լինել, մտնել սառ գերեզման իմ պապի պէս անբախտացած: Օրիորդի մակեղ սառ մէջ ծաղեցաւ կասկած, որը նման էր մահուան սարսափի, որը կապ ունէր նրա պատւի հետ, նրա նամուսի, նրա անմեղութեան հետ :

Այդ օրը այդպէս էլ տիսուր անցաւ, Սոնիան յիշեց որ իշխանը սպասում է իրեն պարտիզում:

Երեկոյ եղաւ, կար կարող օրիորդները բուորն էլ գնացին, Սոնիան էլ հազնուեցաւ ու դնաց պարտէզ կէս ուրախ տրամադրութեամբ :

— Բարի երեկոյ օրիորդ, եկա՞ք, օ ի՞նչքան ուրախացայ, ես կարծում էի թէ չէք գար, աչքս մնաց ճանապարհիդ, շատ ուրախացայ սիրելիս, ուրեմն զնանք նստենք ու խօսենք :

— Սոնիա ջան ասա ինձ խնդրեմ դո՞ւ մնացի՞ր երեկոյ զրոսանքից թէ ո՛չ :

— Եյո իշխան ես շատ գո՞ւ մնացի որ այդքան բարի ընտերութեամբ վերաբերեցաք դէպի ինձ :

— Ա.ա. . այլ կերպ չէր լիներ իմ հրեշտակ, ես հասարակ մարդ չե՞մ, ես իշխան եմ, ինչպէս թոյլ կտայի ինձ անքաղաղավարի վարւել նրա հետ, որին ես սիրումեմ, որին ես պաշտում եմ: Ա.ս Սոնիա, եթէ մի հրաշքով բանայիր սիրու քննչիր նրա միջի սիրոյ յատկութիւնները, այն ժամանակ, միայն այն ժամանակ կհակնացիր, և կհաւատացիր ինձ որ ես եմ քու տէր ու տիրականը: Ա.խ սիրականս, զնանք նստենք մի ուրիշ նստարանի վերաց որ մարդիկ մեզ չխանդարեն, ու հետաքրքրութեան առարկայ չգտանանք :

Ելան գնացին Պարտէզի խորը և մութ ծառերի մէջ նստեցին մի նստարանի վերաց . իշխանը այդ տեղը պատրաստել էր կէս օրւանից: Իշխանը շատ սպածով էր զգում իրեն:

— Այս Սոնիա ջան նայիր քո խեղճ իշխանին, նայիր քո զբան... տես թէ ինչպէս հալւել մաշւել եմ քեզ համար, ան պէտք է խղճա՛ս ինձ, պէտք է թողնե՛ս համբուրեմ:

Ասաց իշխանը և բռնեց նրա փափուկ ձեռքից, ձգեց դէպի իրեն ու համբուրեց: Օրիորդը ինչպէս խելագար արհամարտական հայեցք ձգեց իշխանի վերայ ու ասաց.

— Իշխա՞ն, այդ ինչ է նշանակում, քեզ ո՞վ թոյլ տուեց և ի՞նչպէս համարձակեցար համբուրել իմ անմեղ ձեռքը, իմ անարատ և մաքուր ձեռքը, Դու չի փափուս անդո՛ւթ որ մի փոքրիկ համբոյրը մէկ թեթև շփումը արդէն բաւական է օրիդի անվրդով կեանքը խորտակելու, նրա սիրտը առակն ու վերայ անելու:

— Սյո՞ իմ հրեշտակ գիտե՛մ որ այդպէս է բայց ի՞նչ կարող եմ անել քանի որ սիրտս լիքն է, ես սիրում եմ քեզ չեմ կարող առանց քեզ ասպրել մի վայրկեան, մի րոպէ: Իմ սիրտս է մեղաւոր իմ հրեշտակ իմ մի՛րտը, հանգստութիւն չունիմ, ահա՛ առ ատրճանակը խփի՛ր ինձ, թող ես զո՞ն լինեմ քեզ, ի՞նչ անեմ, ի՞նչպէս վարւեմ քանի որ չեմ կարողանում այլ կերպ վարւել, մէ՛րը, սրտիս հրդէ՞ր ինձ թոյլ չէ տալիս հեռանալ քեզանից կամ արհամարհանքով նայել քեզ վերայ: Այդքան յանդէնութիւնը տուեց ինձ քո մէ՛րը, այն կայծը որ ընկել է սիրտս ու գիշեր ցորեկ հանգստութիւն չէ տալիս. հաւատայ ինձ Սոնիա իթէ ինձ մէկ վտանգ պատահի, դու ես մեղաւորը և դու ձեռքերդ խաչած կը կանգնես գլխիս վերեւում, միայն այն ժամանակ կզգաս որ ես քեզ սիրում եի հարազատ եւ անքիծ սիրով:

Իշխանը թափում էր իւր բերանից համողիչ խօսքեր որ քան որ կարող էր. որ կարողանայ իւր անարդ կիրքերին հաւագեցում տալ, նա ցանկանում էր իւր անարդ կիրքերից դրդւած զոհել մէկ անմեղ օրիորդի, դաւաճանել մի անկեղծ սիրոյ իրիալի: Ի՞նչ աներ Սոնիան, կամայ ակամայ ստիպւած էր հաւատալ նրա խօսքերին, այն հարուստ կալւածատէրը որ ամէնակարող էր թափում իւր աչքերից արցունքի հեղեղ, ինչպէս մէկ կոկորդիլոս, էլ կարո՞ղ էր չհաւատալ: Վերջապէս օրիորդը պթափւեց իւր շփոթւած դրութիւնից արտասուալից աչօք հեկեկալով ասաց.

— Իշխա՞ն, դու ինձ այնպիսի խօսքեր ես ասում որ չի կարելի չհաւատալ. ես էլ քեզ սիրում եմ փոխադարձաբար. կրկնում եմ իշխա՞ն, եթէ քո սէրդ կեղծ լինի, ինձ կմնայ միայն գերեզմա՞ն: Սոնիայի խօսքերը կտրում է իշխանը ու լինքն է պատասխանում.

— Սոնիայ, դու չմոռանաս որ ես երդւեցի և դրանից յետոյ էլ ո՞չ մի առարկութիւն պէտք չէ, ես միայն այն ժամանակ կհաւատամ քեզ, ես միայն այն ժամանակ համոզվեմ. քո դէպի կիրոյ լզագութիւնը, երբ որ ինձ անձնատուր կլինես: Իմացիր իմ հրեշտակ հարազատ և անքիծ սիրոյ համար մարդիկ գոհւում են, կորչում է մարդկանց անձնասիրութիւնը հարազատ սիրոյ առաջ, դու պէտք է անձնւէր լինես, այն ժամանակ ես կհաւատամ քեզ, այն ժամանակ և անգիստ կլինիմ. Մինչև այդ ժամանակ Սոնիան արտասառում էր և ընկած էր սիրոյ կրակի մէջ, չգիտեր թէ ի՞նչ պատասխաներ: Քած էր սիրոյ կրակի մէջ, չգիտեր թէ ի՞նչ պատասխաներ: Քարկանար ու գնա՞ր նրա մօսից, չհաւատա՞ր նրան, հապա եթէ ձիշտ լիներ իշխանի նպատակը չէ որ իշխանի կին պէտք է լինէր, չէ որ շատ աղջիկներ երանի կտային նրան:

Օրիորդը կարծես թէ հոգեարք դրութեան մէջ լինէր, բարկացաւ ինքն իրեն վերայ, ու վճռողական կերպով ասաց.

— Իշխան, մի՛ մոռանար սթէ դաւաճանես ինձ իմացիր որ ինձ համար գերեզման պէտք է փորէս, Սատուած դո՞ւ գիտես, ինչպէս որ կարգադրեցիր թող այնպէս ալ լինի. Երեկ իմ ճակատագիրս այսպէս էր. հասածից օրիորդը, ու ընկեւած դրութեամբ ընկաւ իշխանի գիրկը, իշխանը այդ էր սպասում արդէն... մինչև լրյու պառկած էին պարտէզի կանանչ խոտերի արդէն: Կարծես թէ ընութիւնը հասկացաւ չար որսորդի նպացիրայ: Կարծես թէ ընութիւնը բարկացաւ այդ չար «չէթանի» տակը, կարծես թէ ընութիւնը բարկացաւ այդ չար վերայ: Աւելերը եկան հաւաքւեցան և բռնեցին երկնակամարի վերայ: Աւելերը եկան հաւաքւեցան և բռնեցին երկնակամարի որուալ սկաեցին, կարծես ցանկանում էին մարդկանց հասկացնել որ դժբախտ օրիորդների շարքը անցաւ մ՞ր հրեշտակ ես, մի անմեղ արարած ես, կարծես թէ ամպերը ցանտակ ես, մի անմեղ արարած ես, կարծես թէ ամպերը ցանտակ եին հասկացնել օրիորդին որ քեզ պէս շատերին է ամբախտացրել այդ ստոր արարածը, այդ ցածանողի իշխանը: Լոյսը բացւեցաւ. մայրաքաղաքը կենդանութիւն ստացաւ, սկսւեցին երթեւկութիւնները, կենդանութիւնը վերականգնեց,

Սոնիան արթնցաւ խելագարի պէս իւր չորս կողմը նայեց, տեսաւ իշխանին իւր մօտ պառկած: Քիչ մնաց կաթւածանար լինէր, արդեօք իրենց մարդ չտեսա՞ւ:

— Ո՞չ Սոնիա ջան մեղ ոչ ոք չի տեսել, նայիր թէ ինչքան յարմար տեղ է մեր տեղը, դու անհոգ եղիր: Ա՛յս Սոնիա, Սոնիա, հիմայ հանգիստ եմ, հիմայ անհոգ եմ, եթէ գերեզման մտնեմ նոյն իսկ այդ չեմ մտածեր: Բայց ինձդրում եմ իմթանկագին, այս երեկոյ կդաս այստեղ որ կարեոր խօսք ունիտ խօսելու քեզ հետ, ես վստահ եմ որ այսուհետև ինձ չես մօռանայ: Սոնիան դուրս է գալիս պարտէզից իւր անարտութիւնը կորցրած:

Սոնիան առանց տուն գնալու, գնաց խանութ, բայց խելքը գլխին չեր, նա միշտ մտածում էր. «ա՛յս Սասուած իմ, եթէ նա ինձ խափի, եթէ նո ինձ դաւածանի, ինձ մնում է անձնասպան լինել, միայն անձնասպան»:

Սոնիան իրենց զգումը էր բոլորին կորած, նա մտածում էր որ ինքը թշւատացաւ, նա յանձնաւոր էր ճանաչում այն օրիս որդներին որոնք հաւատացել էին ցածահոգի մարդկանց, ինք էլ է նրացից, ասում էր, զլուխը դրել էր իւր փափուկ ձեռքերի մեջ ու սկսում էր լաց լինել, ողբալ: Սոնիայի աչքերի առաջ էր գալիս իշխանը, նրա կոկորդիլոսի արտասութիւնը, Սոնիան նզուվում էր, անիծում էր այն վայրկեանը որ պատահեցաւ իշխանին, այն չար ստանալին, որ մարդու կերպարանքով էր դուրս գալիս մարդկանց տուած, խափելու, դիմանանելու անմեղ մարդկանց: Ո՞վ գիտէ քա՞նի քանի անմեղ օրիորդների տունն է քանդել անբախտացրել. ասում էր ու լաց էր լինուժ խեղճ բախտակորոյս Սոնիան: Ա՛հ անդո՞ւթ ի՞նչ ես անում այս վարկեանիս, արդեօք քո խիզը չէ տանչում, չնո՞ս զգում որ քո կոպիտ կիրքերին զո՞ւ գնաց մի անմեղ աղջիկ, որը որը էր, անտէ ը, անտիրական որ պարծենում էր իւր սպագայով, ո՞վ գիտէ մի դուցէ իմ ապագան փայլուն կ'լիներ այսքան տանջանքից յետոյ:

Սոնիա, իմ սիրելի աշակերտուհիս ասա ինձ ինչո՞ւ ես այդքան գունաւած, ի՞նչ է քո մտածմունքդ, ասա ինձ ես քեզ համար մայր եմ եղել, ինձանից ոչինչ մի թագինի, բացադրիր ինձ մի դուցէ ես քո դարդին մի որ և է դարձման կանեմ:

— Վարպետուհի ճիշտ է, դու ինձ համար մայր ես եղել, քո որդու նման պահել ես ինձ պահպանել, բայց այս ցաւերիս դարման անել անկարող ես, ինձ համար այսուհետև խաւար է երկինքը, խաւար է երկիրը, խաւար է արևը, ինձ համար չէ կենաց բախար, երջանկութիւնը, վարպետուհիս, սիրելի մայրս, ինչպէս քո հարազատ աղջիկը խոստովանում եմ քեզ, որ մօտ օրերս կամ մօտ ամիսներում ինձ գերեզման կ'իշեցնես, գոնէ վերջին անդամ կլիշես քո աշակերտուհուն ինչպէս անմեղ զո՞ւ: (Ճշմարիտ մարդարէութիւն)ը: Չնայելով վարպետունու այնքան հետաքրքրութեան Սոնիան ոչինչ չբացաւ իւր գաղտնիքներից:

Երեկոյ եղաւ. Սոնիայի ընկերուհիները գնացին պարտէզ, որովհեաւ ամէն մէկին ունէր մի մի սպասող, Սոնիան էլ զնաց բայց տիսուր ու արտում, յուզւած: Իշխանը արդէն սպասում էր Սոնիային: Իշխանը երբ որ տեսաւ դիմաւորեց և ասաց.

— Եկա՞ր իմ սիրական, այսօր կատարեալ խելագար էլ դարձել, ու սպասում էի թէ ե՞րբ պէտք է երեկոյ լինի որ գոնէ գալիք տեսնէի քեզ. ա՞հ, սիրականս ես ինձ բոլորովին բախտաւոր եմ զգում դու ի՞նչպէս, ասա՛, իմ հոգուս հատոր:

— Ես իշխան ամէնից անբախտն եմ զգում ինձ, քանի բոլորովին հակառակը, ու իշխան կարող ես քեզ բախտաւոր զգում, իսկ ես ոչ ոչ անպահակը, իսկ ես ի՞նչպէս կարող եմ համանել իմ նպատակին, քանի որ դեռ սպասկած չեմ. դեռ ես մտասոննութեան սէջ եմ արդեօք կիրագործելի նպատակ թէ՝ գուշ ինձ թշնամի էիք:

— Սոնիա, ուրեմն դու ունիս և մի ուրիշ նպատակ ևս:

— Ի՞նչ ասայիք անդո՞ւթ, հապա դուք ի՞նչ կարծեցիք, միթէ իմ քանկութիւնս էր միայն քեզ հետ զւարձանալ, քո կուպիտ և վայրադ կիրքերին յագեցում առալ: Ո՞չ, դու ինձ խոստացա՞ր, դու երդւեցի՞ր ամուսնանալ ինձ հետ, ես ալ համաձայնեցի Զեղ. դուք, անդութիւնը, դուք ոչինչ չէք կորցնում: իսկ մենք, ո՞ւր է իմ անարատութիւնը, իմ չընազութիւնը, չէ որ դու յափշտակեցիր, եթէ դուք ոճրագործ չէք, ինձ վերաց կամումնանաք այն ժամանակ միայն ես կհասնեմ իմ նպատակին:

— Սոնիա, ի՞մ չքնար նազելի, դու մի՛ յուդիր, մի՛

մտածիր, եթէ ժամանակը դայ ևս քեզ կասեմ, կյայտնեմ այն օրը, որ կկատարւի մեր նշանախօսութիւնը, դու ի զուր մի մտածիր, մի տանջւիր :

Իշխան, ե՞րբ պէտք է դայ ժամանակը, երևի այն ժամանակ երբ ևս մա՞յր եղած կլինեմ, այն ժամանակ ո՞չ թէ պսակ այլ գերեզման, գերեզման պէտք է պատրաստես ինձ համար : Դու իշխիր իշխան, ևս ոչ թէ քո իշխանութեան վերայ սիրահարւեցի, ոչ, այլ քո խօսքերի և անկեղծ լեզւի :

— Հոգո՞ւս հասոր, դու մի՛ մատածիր առ այժմ, ևս քեզ համար կվարձեմ մէկ սենեակ մէկ աղախին, դու այնտեղ կրնակւես իսկ ևս միշտ կդամ քեզ այցելութեան մինչեւ այն ժամանակ որ կամումնանամք. չմտածես ինչըրեմ, ևս արդէն պէտք է պատրաստութիւն տեսնեմ :

— Իշխան, իսկը աղնուութեան խղճայ վերաս ինձ անբախտութեան պատճառ մի՛ դառնայ, ևս արդէն անբախտ եմ ծնւել, յոյս ունէի որ մի գուցէ մի բախտի կարժանանամ, այն էլ քեզ պատահեցայ : Կորաւ գեղեցկութիւնս, կորաւ պատիւս, անարատութիւնս, մի խօսքով դու եղար պատճառ իմ անմեղարեան :

Այն ժամանակ իմ հրեշտակ
Գերեզմանիս վերայ արի,

Ու իրեւ յիշատակ

Մէկ վարդի թուփ պատւաստի :

— Սոնիա բաւական է յուղես, քանի որ յուղմունքդ բոլորովին անտեղի է, աւելի լաւ է գնանք այսօր մէկ հւրանոց, այնտեղ լաւ ժամանակ կանցնենք ու յետոյ Սասուած ողորմած է : Ելան երկուսով թեւանցուկ գնացին հիւրանոց :

Միւս օրը գնացին մէկ սենեակ վարձեցին : Սոնիան իւր աղախնի հետ ապրում էր սենեակում : իսկ իշխանը շաբաթը մի քամի անգամ գալիս էր նրա մօտ այցելութեան : Անցնում է ամիսներ, իշխանը ամուսնութեան հարցը միշտ յետածդում է . այնպէս որ անցաւ ութը ամիս ու յետոյ . . . յետոյ իշխանը չեկաւ, մոռացաւ նրան : Սոնիան սպասեց տասը օր, իշխանը չեկաւ, յուղեց խեղճ բախտակորոյս տղջիկը շատ լոց եղաւ բայց ի՞նչ օգուտ : Սոնիան յանկարծ պթափւեց կարծես ինելաւ գար ու ինքն իրեն ասաց, աւելի լաւ է գնամ նրանց ապա-

րանքը ու տեղեկանամ մի գուցէ հիւանդ է նա, իսկ ևս նրան յանցաւոր եմ ճանաչում, գնամ և ստուգեմ :

Կորաւ օրիորդի երեսից գեղեցկութիւնը, նա կմախք էր դարձել, նա, այն հրաշագեղ օրիորդը չէր . . . նա տանից փողոց վախենում էր դուրս գալ, վինի թէ կ'պատահի իւր ծանօթներին, նա կարծում էր որ ամբողջ ալխարհը նղովքեր կ'որդում իւր գլխին, թէ ինչո՞ւ հաւատաց անպատճի մարդու, չէ որ իւր պասլը ասաց որ մարդկանց չէ կարելի հաւատալ : Ի՞նչ սանմ Աստուած իմ գոնէ յզի վինէի այն ժամանակ եւն ինձ կ'թունաւորէի . բայց ինչո՞վ է մեղաւոր այս խեղճ երեխան որ նրան անգիտութեանը զանցաց : Առանց երկար մատածելու հագաւ իւր սեւ ճանապարհագիւտար ու գնաց Ցարուկայս փողոցը, ուր որ գանցում էր իշխանի ապարանքը : Ի՞նչ է այս Աստուած իմ, հաւատանո՞մ արդեօք ականջներիս, մողիղացին նւագո՞ւմ, ու բախութիւն են անո՞ւմ : Չինի թէ իշխանը ամուսնացաւ : Օրիորդը մեաց շւարած ու քարացած միենոյն տեղում :

Միւեւնոյն տեղից անցնում էր սատիկանը, Սոնիան մոտածեց հարցնել սատիկանին, արդեօք ճիշդ էր իւր կարծիքը . . . :

— Պ. սատիկան ի՞նչ է այս, ի՞նչ մողիղացի ձայն է գալիս ապարանքից :

— Օրիորդը, իշխանը ամուսնութեան պատրաստութիւն է տեսնում, վաղը ճաշից յետոյ պէտք է կատարւի նրանց ամուսնութեան հանդէսը, Մայր Ճամացաւ:

Օրիորդը կարծես թէ չէր հաւատում իւր ականջներին, ու ինքն իրեն հարցեր տալիս, հաւատանո՞մ արդեօք, միթէ նա ինձ դաւաճանե՞ց, ինձ համար գերեզման փորեց : Օրիորդը հետ-հետ դաւաճանեց, ինձ համար պատին ինչպէս կաթւածահար, Ահ, Աստուած գնաց ու կ'պաւ պատին ինչպէս կատարեցաւ այդ խեղճ աղջկայ հետ : Սոնիան լուռ մունջ կատած էր իշխանին դռանը . նրա աչքին պատկերացան իւր անցեալը, նա յիշեց իւր պատի խօսքերը որ առում էր . « աղջիկս մի հաւատար մարդկանց, մարդիկ անգութ են, մարդիկ անխիղճ են » . նրա աչքին պատկերացաւ իրենց արհեստանոցը, իւր պարկեշտաւթիւնը, այն դեւը որ մարդու կերպարանքով եկաւ ու խափեց իրեն : Երբ նրա երեւալիայութեան մէջ պատկերացաւ իշխանը, նա զղւեց, բարկացաւ, նա դարձաւ ինչպէս մի գաղան, ինչպէս մի վի-

ըաւոր կորիւն, դուռը բայաւ և յանդոգն կերպով հերս մը-
տաւ դաշիճ. որ աեղ հաւաքւել էին քաղաքի բոլոր իշխան-
ները և Մեծամեծները:

Օրիորդը ոճրարդի կերպարանք էր ստացել, աչքերը
թռել էին քուքերի տակը, մազերը գդագդւած, կանգնեց ու-
ղիղ սենեհակի մէջտեղում ու աչքերը չուց բոլոր հանդիսական-
ների երեսին. նա ցանկանում էր գտնել նրան, այն ամփիղ դեւին ու վրէժինդիր լինել:

Օրիորդը բարկացած աչքերը սեղմեց հանդիսականների
վերայ, ու բարձր ձայնով գոռաց.

— Ուր է, ուր է այն մարդասպանը, այն ոճրագործը,
այն գաղանը, այն անդութը որ իմ անբախտութեանս պատճոռ
դարձաւ. խօսէք հանդիսականներ, խօսէք անդութներ, ա՛ն
ինչու էք հաւաքւել այստեղ, հարսանեաց հանդէս տօնելու,
ո՛չ, այս տունը հարսանիքի ուրախութեան տուն չէ, այլ ոճ-
րագործի. մարդասպանի. նա խափեց ինձ, ես մէկ գեղանի
օրիորդ էի, նա խօսք տեաւ ինձ որ ամուսնանար ինձ հետ,
բայց յետոյ դաւաճանեց, ես հիմայ կոյս աղջիկ չեմ, նա յա-
փշտակեց իմ կուսութիւնս, իմ ազնութիւնս, ես մայր եմ
մայր, մի թշւառ մայր որ զո՞ն եղայ մի ոճրագործի, մի մար-
դասպանի, խօսեցէք ինչու էք լուել, լեզու չունիք հա՞ա: Ես
եկել եմ հայիւ պահանջելու, ցոյց տւէք նրա տեղը: Հանդիսա-
կանները ասզել ու նայում էին նրա վերայ, որ ինչպէս մի զի-
շերային չար ոգի թափում էր իւր սրտի թոյնը մանկանցու-
ների վերայ: Մի սոսկում տիրեց հանդիսականների մէջ, մի
սոսկում, որ կարծես թէ գերեզմանատան մէջ եղած լինէին:
Հանդիսականներից շատերը ելան, և նեղացած գնացին իրենց
տները:

Նեղացած դուրս եկաւ իշխանի հայրը հանեց իւր զրպա-
նից հարիւր ըուբի թղթէ դրամ և ընծայեց օրիորդին իրեւ-
պատւի տուգանք: Սօնիան կատաղած յարձակւեցաւ մէծ իշ-
խանի վերայ, որի կուրծքը զարդարւած էր չքանչաններով.
առաւ հարիւր ըուբիանոց թղթէ դրամը հաղար կտոր արեց ու-
ձեց իշխանի տաքերի տակ:

Դու՛, անդութ ծերունի, դեռ իշխան ես և քեզ դեռ
պատւանչանեն տուել, այդ նշանները քեզ ընծայողի հայրը

անիծւի որ քեզ պէս մարդասպանին պատւանչան է տուել. ոճ-
րագործ, դու կարծեցիր որ ևս գրամական հաշիւ եմ պահան-
ջում քեզանից և քո անդութ որդուց, ո՞չ. ես պահանջում եմ
քեզանից խզնի, հաշիւ, համկացար, ես մէկ անմեղ զո՞ն եմ, զո՞ն
քո որդու խաբերայութեան: Դուք դատեցէք հանդիսականներ
ինչ անեմ հիմայ, գոնէ ինձ սպաննեցէք, դատապարտեցէք եւ-
թէ յանցաւոր եմ: Սիմէօն Պէտրովիչ ինչպէս դու սպաննեցիր
իմ ծերացած պապիս, նրա հարստութեանը տէր դարձար, այն-
պէս էլ քո անիրաւ որդին սպաննեց ինձ, իմ անմեղութիւնը,
իմ անարատութիւնը յափշտակեց, ա՞ն Աստւած իմ դու խզա՞ս,
այլս ես ապրիլ չեմ ցանկանում: Հանդիսականները աւելի ևս
սոսկացին երբ լսեցին որ այն յացանի մարդու աղջիկն է եղե
որը զո՞ն գնաց իշխանի անդութեանն, խաբերայութեան:

Օրիորդը կորցրեց իրեն, գլուխը պտոյս եկաւ, աչքերը
ռեցան, և գլորւեցաւ տախտակամածի վերայ, որը զարդար-
ւած էր պարպական մաքուր գորդով:

Այն ահաբեկ ձայն ու աղաղանիներից օրիորդը արթնցաւ,
և կցկտուր ձայնով ասաց . . .

— Փառք . . . Աստուծոյ . . . որ . . . իմ . . . սեպհականութեա-
նըս . . . մէջ . . . հոգիս . . . աւանդեցի: Դրանից երեսում էր որ
այդ ապարանքն էլ եղել է այն խեղճ Մաքսիմինը, որ մեռաւ
քաղցած ու ծարաւ ցուրտի մէջ: Մեծ իշխանը աւելի ևս բար-
կացաւ, կանչեց իւր ծառաներին հրամայեց որ կառք կանչեն
ու դիակը փոխադրեն հիւանդանոց: Բայց ինչ զարմանք, երբ
որ վերցրին դիակը, տեսան որ Սոնիան վիժում է ունեցել:
երկուսին էլ հոգեարք դրութեան մէջ փոխադրեցին հիւանդա-
նոց:

Միւս օրը իշխանը իւր նոր հարմանացուի հետ գնում էր մայր
եկեղեցի ամուսնանալու, որի վերայ իրեւ օժիտ կար 200,000
ըուբիլի:

Միենոյն ժամանակ փոխադրում էին երկու անշուք դիակ-
ներ դէպի գերեզմանատուն միմիսնց գրկած, իսկ դիակների
վերայ կար դրւած իրեւ օժիտ մէկ ծալկեալսակ, որի վրայ
գրւած էր մեծ մեծ տառերով,

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

Պարտաւորւեցայ այս իրական կեանքը ներկայացնել յարգելի ընթերցողներիս իբրև վէպ, որովհեանեւ միևնոյնը կատարւում է և կ. Պոլսում աւելի ևս ցաւալի կերպով։

Հարուստ երիտասարդները յօյսը դրած իրենց անարդ դժբամների վերայ, զրհւում են անմեղ օրիորդներին առանց խղճահարւելու, ինչպէս որ տեսաք վէպին մէջ։ Թող հասկնան օրիորդները որ բարոյականութիւնն է աշխարհի դէկը և իրենք էլ պարտական են հասկանալու որ բարոյականութիւնն է իրենց փառք ու պատիւը։ ուրեմն պարտ եմ համարում ինձ խմացնել Զեզ համեստափայլ օրիորդներ և տիկիններ չհաւատաք երիտասարդներին և խոյս տւէք շացուցիչ խոստումներէ։



ԴՐԱՎԱՑՄՈՒ - ՀՐԱՏԱՐԱԿԻՑ
ՑԱՆԿԵԼՍՆ Կ. Ա. Ա. ՇԱԽԵԼՍՆ

Համատառութ 1868 ին

Կ. ՊՈՂԻՄ

Զամանակակից Հայութ ին 29

Դ. Հ. Հ.

Կեանի զործածուք. Լուս էլլպիւրի, բրդ. Գր. Ռուկեան	7
Պարեկ բարոյական դաստիարակուրեան, հազարապ.	4
Կենագրութիւն Խզմիրլեան եւ Գուրեան սրբազն.	2
Մոլորեալ ճամբորդը կամ Զինուր. Օրեւան, բատերգ.	1
Կրարան Ֆրանսերեն լեզուի, Դեռոգ Մերժինեան	3
Դամելիազարդ տիկին, բարձ. Պ. Աւրունի	8
Փիլիսոփային աշակերտը, բարձ. Օ. Զիֆրե-Սարան	6
Ուղեւորութիւն Շուշազ զլուսնով, Ժնև Վ. Է.	8
Պատմ. պատամանց եւ կրօնական արարողուրեանց	5
Յիշատակաց ծաղիկներ, բանասեղծութիւնն	5
Նկարագրութիւն Ս. Երուսաղեմի, Տ. Եպ. Պալեան	6
Առողջբ. ամուսնական, Տօք. Քլիման	5
ԼԻԱԿԱՏՈՐ ՀԱՅԿ. ԵՐԳԱՐԱՆ	7½
Իտեալի Զօմբ Աշուղ Շահնազար	1
Մերի Վերեբը » »	2
Կոկոններ, Բանասեղծ Ա. Տ. Եղիազարեան	2½
Աղօս նոյններ, Բանասեղծ Բ. Խաղեկերեան	2½

2013

14863

